ՀՀ Վայոց ձոր մարզ գյուղ Արտավան

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները և իրականացման ուղիները

Ուսուցիչ՝ Թամարա Սմբատյան

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022

Ներածություն

Տարրական կրթությունը հանրակրթության հիմքն է :Այս փուլում ուսուցման առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից՝ սովորողների տարիքային առանձնահատկություններով, մյուս կողմից՝ կրթական համակարգի սկզբնական փուլի պայմաններով: Այս փուլում յուրաքանչյուր անձի (երեխայ) մոտ տեղի է ունենում ուսումնական հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորումը, ինքնագիակցության զարգացումը:

Հաշվի առնելով այս առանձնահատկությունները «Հանրակրթության պետական չափորոշիչը» սահմանում է տարրական կրթության հիմնական նպատակները: Դրանք են՝

- Մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը,
- Լեզվամտացողության, գրագիտության, տրամաբանության ստեղծումը,
- Աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը,
- Բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը,
- Բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիական դաստրարակությունը,
- Միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը

Հանրակրթության պետական չափորոշիչն այս նպատակներին համապատասխան սահմանում է այն հիմնական կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևավորել կրթության տարրական փուլում: Այսինքն տարրական դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա՝

- Հայերենով հաղորդակցվել, ընկալել ուրիշների խոսքը,
- Կարդալ և հասկանալ պարզ տեքստեր, գրավոր շարադրել պարզ տեքստեր,
- Սովորել և սովորեցնել՝ տիրապետել սովորելու հիմնական հմտություններին,
- Ինքնուրույն գործունեություն ցուցաբերել,
- Աշխատել համագործակցված, լինել նախանձեռնող,
- Արժևորել իրազգային ինքնությունը,
- Իմանալ իր իրավունքներն ու պարտականությունները,
- Ցուցաբերել հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ:

Մի խոսքով տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության այն անհրաժեշտ պայմանները, որոնք հարկավոր են կրտսեր դպրոցականին, որպեսզի այդ երեխան փոխադրվի միջին դպրոց և ուսումը շարունակի այդ փուլում:

Նշեն նաև, որ կրտսեր դպրոցում պիտի կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը, այլ դրանց՝ երեխաների կողմից յուրացման ձևերը: Կրտսեր դօրոցում երեխան պետք է կարողանա.

- Ըմբռնել բերանացի խոսքը,
- Ըմբռնել գրավոր խոսքը,
- Գործածել գրավոր և բանավոր խոսքերը միաժամանակ

Իսկ այս փուլերը ճիշտ իրականացնելու համար գոյություն ունի հատուկ նախապատրաստական շրջան (կամ նախաայբբերնական շրջա) որն իրականացվում է I դասարանում «Այբբերնարանի» ժամերին 56 դասաժամով: Այդ ժամերը պետք է իրականացվեն շատ հանգամանալից և տևական, քանի որ երեխաները պետք է նախապատրաստվեն և տևական ուսումնական գործընթացին թե հոգեբանորեն, թե ֆիզիկապես և թե լեզվական տեսակետից: Նախապատրաստական շրջանի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված որոշակի խնդիրներ: Գրաճանաչության նախաայբենական շրջանի հիմնական խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերօական և ուսումնական:

Կազմակերպական խնդիրներն են՝

1. Երեխաների ծանոթացում նրանց համար նոր ուսումնական գործունեությանը

- Ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ
- Աշակերտների ծանոթացումը միմյանց հետ
- Ծանոթություն դպրոցի կարգուկանոնին, շենքին:
- Ծանոթություն երեխաների իրավունքների և պարտականություններին
- Աշակերտական նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելու, խոսելիս կանգնելու ունակությունների մշակում
- Ուսուցչի խոսքը լսելու, հասկանալու տրված հանձնարարությունները կատարելու ուբակության զարգացում
- Գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնների յուրացում
- Հարմարեցում ուսումնական գործունեությանը:

Ուսումնական խնդիրներն են՝

1. Ուսումնական գործունեությանը երեխաների պատրաստակամության մակարդակի բացահայտում:

Դա պետք է ուսուցիչը կատարի մինչչ ուսումնական տարին սկսելը, որը կարևոր նյութ կտա ուսուցչին գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար:

2. Նախաայբբենական շրջանի վերջում աշակերտների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները:

Գրքաճանաչության այբբբենական շրջանն արդյունավետ իրականացնելու համար երեխաներիը նախաայբբենական շրջանի վորջում պետք է՝

- Գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին
- Գիտակցեն ձայնավորի դերը
- Ունենա որոշակի բառապաշար և մտքերը կապակցված խոսքով ներկայացնելու կարողություն
- Ձեռքերը նախապատրաստված լինեն գրելուն
- Ունենա ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմաններիի մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություն
- Կարողանան գրել հայերենի տառերի պարզ մասնիկները՝ ըստ նրանց չորս տեղադրության

3. Ուկնդրում և խոսք

- Կարողանան ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ սեղծագործությունները ունկնդրել և հարցերի օգնությամբ վերարտադրել:
- Անգրի իմանա և արտասանեն սովորած շուտասելուները, հանելուկները և քառատողերը
- Կարողանան նկարների շուրջ մտքերով իրար հետ կապված 2-3 նախադասություն կազմել
- Կարողանան պատմել տեսածը, ուկնդրածը՝ ըստ հիշողության
- Կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացնող անունների և ըստ նրանց հատկանիշների:

«Այբենարանի» նախապատրաստական բաժնի հիմնական գրաճանաչության համար անհրաժեշտ հիմք ստեղծելն է: Այն նյութ է տալիս ծատ լեզվական, ճանաչողական և դաստիարակչական աշխատանքների համար:

Նախապատրաստական փուլի դասերիթեմաններն ընտրված են երեխաների կյանքից: Նրանց մոտ պետք է մշակել դպրոցականի կյանքի նոր ռիթմ: Ահա թե

ինչու Այբենարանի առաջին թեմաները նրանց ավելի հարազատ են, քանի որ դրանք առնչվում են իրենց նոր կյանքի և դրա գիտակցման հետ: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր թեմա պետք կապել երեխաների առօրյայի հետ, որպեսզի լուծվի գործնական կրթադաստիրակչական խնդիրներ:

«Այբենարանի» նախապատրաստական փուլում էջ-դասերի մեծ մասը տրված է թեմատիկ նկարով, իսկ ներքևում մի քանի առարկայական նկարներով, որոնք կապված են թեմատիկ նկարի հետ: Այդ նկարները կազմում են թեմատիկ նկարի բաղադրիչ մասը և լրացնում են էջում ներկայացված նկարի պատմությունը: Այսպիսի մասնատումը նպաստում է ամբողջի ավելի ճիշտ և լավ հասկանալուն և հրարավորություն է ստեղծում լեզվական ու տրամաբանական աշխատանքն ավելի մատչելի դարձնելու, որովհետև վեց տարեկան երեխան ամբողջը ավելի հեշտ է ընկալում մաս-մաս՝ բաղադրիչների օգնությամբ: Նկար պատմությունները, որոնց 6 տարեկան I դասարանցին հանդիպում է Այբենարանի նախապատրաստական փուլում՝ դասագրքի սկզբնամասում,նպաստում են երեխաների մեջ վերլուծական կարողությունների զարգացման և մշակմանը և երեխաները կսովորեն պարզ համադրում կատարել՝ մասից գնալ դեպի ամբողջը: Այս կարողության մշակումը կևևոր նշանակություն ունի կարդալու և գրելու ուսուցման համար: Նախապատրաստական շրջանի յուրաքանչյուր էջ Այբենարանում ունի իր յուրահատուկ կառուցվածքը, բովանդակությունը, իր նպատակներն ու խնդիրները և դրանցով պայմանավորված աշխատանքի ձևերն ու մեթոդական հնարները: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է լավ իմանա իր անելիքը, որպեսզի այդ էջերի ուսուցողական հնարավորությունները ճիշտ օգտագործի: Յուրաքանչյուր էջ նոր գիտելիքներ ու տեղեկություններ է պարունակում շրջապատող աշխարհի վերաբերյալ:

Նախապատրաստական փուլը նաև իր առջև նպատակ ունի լեզվական նյութի ուսումնասիրմանը մեծ ուշադրություն դարձնել: Այս փուլում կարևոր է լեզվական վերացական հասկացությունները զննական դարձնելու և սովորածը մտապահելու համար: Իսկ նախասասության, բառի, վանկի, միավանկի և բազմավանկ բառերի, հնչյունի, ձայնավոր և բաղաձայն հնչյունների, տառի, մեծատառի ու փոքրատառի և այլ լեզվական հասկացությունների մասին երեխաները պետք է գաղափար կազմեն նախաայբբենական շրջանում:

Ամենասկզբում պետք է բառի մասին հասկացություն տալ, այնուհետև վանկի, որը համարվում է բառի արտասանական միավոր կամ հենց մաս: Այսքանից հետո պետք է ծանոթանան միավանկ և բազմավանկ հասկացություններին: Դրանք մատչելի դարձնելու համար Ա. Բանրաթյանն օգտագործել է վանկային կորերը:

Վաննկից անցում է կատարվում հնչյունին, որպեսզի հետագայում հող նախապատրաստվի գրաճանաչության ուսուցման համար: Սկզբում գաղափար է

տրվում վանկի, ապա նաև բառի մեջ եղած հնչյունների մասին, իսկ ավելի ուշ երեխաները պետք է կարողանան տարբերել երկար արտասանվող ու քիչ ձայն ունեցող բաղաձայն հնչյունները:

Նախաայբենական փուլում գրելու ուսուցմանը նախապատրաստելը ևս կարևոր նշանակություն գրաճանաչության ուսուցման համար:Գրաճանաչություն ասելով հասկանում ենք ոչ միայն հնչյունների գիտակցումն ու դրանց համապատասխան տառերի ճանաչումը, այլ երեխան պետք է սովորած տառերը կարողանա գրել, այնուհետև տառերը համադրելով բառեր ու նախադասությունների կազմելը: Դրա համար ամենասկզբում պետք է զարգացնել աջ ձեռքի դաստակի ու մատների մանր մկանային համակարգը:

Շատ կարևոր նշանակություն ունեն պատկերների գունավորման վարժությունները, որոնց շնորհիվ երեխան սովորում է գրիչ բռնել, մատիտով աշխատել, պահել գունավորման չափերն ու սահմանները պահել, տարբերել գույները: Շատ կարևոր նշանակություն ունեն գրատետրերը: Երեխաների համար մի քիչ բարդ է պարզ պատկերների մանրագծումն ու նրբագծումը, որը զարգացնում է աչքաչափը, հեռավորությաննմանության զգացողությունը:Որոշ աշխատանքներ՝ օրինակ պարզ պատկերների նկարումը, պահանջում է լարվածություն և պատկերելու կարողություն: Այս ամենը աշակերտին նախապատրաստում են գրելու ուսուցմանը, դրանք կոչվում են նախավարժություններ և դրանք հող են նախապատրաստում տառամասնիկների գրության անցնելու համար: Իսկ տառամասնիկները 7-8 տեսակի տարբեր մասնիկներ են, որոնք մասնակցում են մեր բոլոր տառերի ձևավորմանը: Տառամասնիկներին անդրադառնում ենք նաև այբբենական շրջանում:

Շատ կարևոր նշանակություն ունի կարդալու նախապատրաստումը: Այդ գործողությանը երեխաներին նախապատրաստում ենք դեռևս նախաայբբենական շրջանում: Ուշադրություն ենք դարձնում բառերի գծային մոդելներին ու վանկային կորերին, ինչպես նաև վանկերով կարդալուկարեղության զարգացմանը:Այբենարանի յուրաքանչյուր էջ, նախաայբբենական շրջանում, ունի իր յուրահատուկ կառուցվաշքը, բովանդակությունը, նպատակներն ու խնդիրները: Եվ ուսուցիչը դրանցով պայմանավորված պետք է ունենա իր աշխատանքի ձևերն ու մեթոդական հնարները:

Նախաայբբենական փուլում ուսուցիչը պետք է այնպես աշխատի, որ երեխայի մեջ արթնացնի հետաքրքրասիրություն, սեր՝ գրքի և դպրոցի նկատմամբ և ամենակարևորը երեխան պետք է հաճույքով հաճախի դպրոց ու ունենա սովորելու ցանկություն: Նախաայբբենական փուլում երեխանները սովորում են մրցակցել, դառնալ հանդուրժող, համերաշխ լինել, շփվել միմյանց հետ, քաղաքավարության կանոններ են ձեռք բերում, կարողանում են իրենց մտքերը ճիշտ ձևակերպել:

Այն ինչ նախատեսում է ծրագրիը, չափորաշիչը, դասագրքում՝ «Այբենարանում» այդ ամենը միս ու արյուն են դառնում գիդակտիկական ու մեթոդական որոշակի համակարգով, պարզ, մատչելի ու հասկանալի շարադրանքով մատուցվում են երեխաներին: Դրա համար էլ թեմատիկ պլանները՝ ըստ չափորոշիչների և դասագրքերը պետք է լինեն իրար համապատասխան, քանի որ ուսուցման համար վճռական դերը պատկանում է դասագրքերին, որտեղ պարզ երևում է նյութի հաջորդականությունը:

Պետք է հաշվի առնել նաև, որ 6 տարեկան երեխաները երկար ժամանակ չեն կարող զբաղվել միևնույն գործողությամբ, որովհետև նրանք շատ արագ հոգնում են: Այդ պատճառով անհրաժեշտ է նրանց գործունեության ձևերը փոփոխել 10-15 րոպեն մեկ՝ հաշվի առնելով դաս ընհանուր պլանը և մեր առջև դրված նպատակը: Զրույցներն ու պատմությունները պետք է ընդհատվեն երեխաների ակտիվ գործունեությամբ և ֆիզիկական վարժություններով: Պետք է նախատեսվեն հետաքրքրաշարժ խաղեր, հանելուկների գուշակում, հեքիաթների պատմում, դրանց բեմադրում, ազատ նկարչություն, երգ, պար, ռիթմիկ և այլն:

Յուրաքանչյուր դասաժամ սկսվում է հետևյալ կերպ.

1. Կազմակերպական պահ
2. Տնային աշխատանքների ստուգում
3. Անցած ուսումնական նյութի կրկնություն,ամրապնդում
4. արցազրույց հանձնարարված թեմայի շուրջ
5. Ֆիզկուլտ դադար
6. Նոր նյութի հաղորդում
7. Դիդակտիկ և հետաքրքրաշարժ խաղեր
8. Նոր նյութի ամրապնդում
9. Գրավոր աշխատանքի կատարում
10. Ամփոփում. Գրավոր աշխատանքի հանձնարարում:

Նախաայբբերնական շրջանում իվրև նմուշօրինակ ուսուցչի հյուսած պատմությունը պետք է բացատրել պարզ հասկանալի և հասկացնել, որ ամեն նոր սկսվող միտք համարվում է նախադասություն: Որ այն պետք է գրել մեծատառով և գծապատկերը , որը կա «Այբենարանում», պետք է ցույց տալ: Պետք է ճանաչի վերջակետը, հասկանա, որ դա նշանակում է, որ միտքը ավարտված է, այսինքն նախադասությունը վերջացել է:

Այնուհետև գաղափար պետք է տալ բառի մասին: Դրա համար ուսուցիչը ասում է նախադասություն, ապա ծում գրատախտակին դրա գծապատկերը: Սկզբում բառը կոչում ենք մաս, այնուհետև դրանք անվանում բառեր և գծապատկերը կիսեով՝ դրանք տեղադրում գծապատկերի մեջ: Այս գործընթացը շատ ժամանակատար և

աշխատատար գործընթա ց է և մեծ ջանք է պահանջում: Սակայն երբ այդ խնդիրը լուծվում է, գրաճանաչության գործընթացը արդյունավետ է տեղի ունենում:

Կարևոր է նաև, որ երեխան վանկի մասին նույնպես գաղափար կազմի: Դրա համար ուսուցչուհին նախ բառը արտասանում է լրիվ, ապա վանկերի բաժանելով՝ ծափ տալով, ապա հաշվելով ծափերի (մասերի) քանակը: Դրանքվ երեխաները կհամոզվեն, որ կան այպիսի բառեր, որոնք հնարավոր է մա-մաս աել և նաև հակառակը՝ հնարավոր չէ դա:

Գաղափար հնչյունի մասին: Այս աշխատանքը իրաացնոլու համար ուսուցիչը երեխաներին հանձնարաում է ասել միավանկ բառեր: Հետո գծում գրատախտակին դրանք գծապատկերները և հասկացնում, որ միավանկ բառերը ոնեն տարբեր հնչյունների քանակներ: Երեխաները հասկանում են, որ դրանք չեն կիսվում ու ծափերով ցույց են տալիս:

Ապա ուսուցչուհին նույն աշխատանքը տալիս է բազմավանկ բառերի շուրջ և երեխաները հասկանում են, որ բառերը լինում են կամ երկար, կամ կարճ, կախված այն բանից, թե նրանց մեջ հնչող ձայների թիվը որքան է: Կհասկանան ձայնավոր և բաղաձյան հնչյունները որոնք են: Խմբով կարտասանեն ձայնավոր հնչյունները: Լեզվական այս նախագիտելիքները շատ բարդ է և ուսուցչին անհրաժեշտ է երկարատև աշխատանք:

Բառը վանկերի բաժանելու, վանկերն իրար միացնելով բառեր ստանալու, բառի մեջ վանկի տեղը գտնելու կարողությունների զարգացման նպատակով կարելի է կատարել վարժություններ, խաղալ դիդատիկ խաղեր, որպեսզի դասանյութը ավելի մատչելի ու մնայուն լինի, քանի որ բժվեց տարեկան երեխան ամեն ինչ հեշտ է հիշում երբ նրան հոգեհարազատ խաղի միջոցով ես բացատրում: Դրա համար գոյություն ունեն շատ ու շատ դիդակտիկ խաղեր՝

1. Որ առարկան չկա
2. Բնակեցրու կենդանիներին
3. Այն ով է կանչում
4. Բառաշղթա
5. Գտիր սխալը
6. Գտիր բաց թողած հնչյունը և այլն

Եզրակացություն

Նախայբբենական փուլում լեզվական նախագիտելիքների ուսուցումը, որպես գրաճանաչության ուսուցման համար լեզվական նախադրյալների ստեղծման պայման խիիստ անհրաժեշտություն է, որի վրա պետք է շատ ուշադրություն դարձնել: Բոլոր աշխատանքները ուղղվում են մեկ նպատակի՝ երեխաներին գրճանաչության նախապատրաստելուն: Գրաճանաչության ուսուցման համար աշակերտները պետք է ունենան որոշակի լեզվական գիտելիքներ: Նրանք պետք է տեսականորեն և գործնականորեն նախապատրաստվեմ կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը:

Նախայբբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, անկատ կերպոց նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ կատարելուն նախապատրաստելը և միաժամանակ, նրանց մտածողության զարգացումն է, սեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը:

Օգտագործված գրականություն

1. Ա. Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան «Այբենարան» ուսուցչի ձեռնարկ
2. Ա. Ե. Տեր-Գրիգորյան «Հայոց լեզվի մեթադիկա»
3. Համացանց
4. Ջուլիետա Գյուլամիրյան «Հայով լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա» հրատարակչություն 2006թ